ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE74-8F8C-4EB3-B655 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

գործ թիվ ԵԴ2/2366/02/26

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

նախագահող դատավոր Աննա Շիլաջյանի

2026 թվականի ապրիլի 21-ին քաղաք Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան)՝ ուսումնասիրելով ըստ հայցի «Ռիտա Գասպարյան Արմենի» ԱՁ-ի ընդդեմ ՀՀ ԱՆ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲ ընկերության՝ ՀՀ ԱՆ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲ ընկերության տնօրեն Կարեն Ծառուկյանի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 30.01.2026 թվականի թիվ 18-Ն որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին, քաղաքացիական գործը,

ՊԱՐԶԵՑ

«Ռիտա Գասպարյան Արմենի» ԱՁ-ի ներկայացուցչը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ ԱՆ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲ ընկերության՝ ՀՀ ԱՆ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲ ընկերության տնօրեն Կարեն Ծառուկյանի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 30.01.2026 թվականի թիվ 18-Ն որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցվորի ներկայացուցիչը էլեկտրոնային դատավարության համակարգի միջոցով (այսուհետ՝ Համակարգ) 03.03.2026 թվականին, ժամը 22:37-ին ստեղծվել է (ներկայացրել է) հայցադիմում, որը 04.03.2026 թվականին մակագրվել է դատավորին, իսկ Համակարգում դատավորին և նրա աշխատակազմին հասանելի է դարձել նույն օրը ժամը 21:30-ին:

Հաշվի առնելով, որ այդ պահին աշխատանքային ժամն ավարտված է եղել, Համակարգում հասանելի դառնալու պահ է համարվում 05.03.2026 թվականը:

Դատարանի 10.03.2026 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ, պատասխանողից պահանջվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, և դատական ակտի հրապարակման օր է նշանակվել 21.04.2026 թվականին՝ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը գնումների հետ կապված վեճերով գործերի քննության համար սահմանել է հատուկ ժամկետներ, այն է՝ գնումների հետ կապված վեճերը պետք է քննվեն և լուծվեն հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում, բացառությամբ, երբ Դատարանը գալիս է եզրահանգման, որ կոնկրետ գործի առանձնահատկությունից ելնելով անհրաժեշտ է այդ ժամկետը երկարաձգել:

Տվյալ դեպքում, Դատարանը ելնելով սույն գործի առանձնահատկություններից և ծավալից, գործի ամբողջական, բազմակողմանի և օբյեկտիվ քննությունն ապահովելու համար անհրաժեշտ է ժամկետը երկարաձգել և գործի քննության արդյունքով կայացվող եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր նշանակել 26.03.2026 թվականին:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-րդ, 199-րդ, 200-րդ և 234.5-րդ հոդվածներով, Դատարանը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ ԵԴ2/2366/02/26 քաղաքացիական գործի քննության ժամկետը երկարաձգել և եզրափակիչ դատական ակտը հրապարակել **2026 թվականի ապրիլի 29-ին**՝ դատական իշխանության պաշտոնական կայքում:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ **Աննա Շիլաջյան**

Digitally signed by SHILAJYAN ANNA 5208910872
Date: 2026.04.21 22:38:28 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am